Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2022. «Բերդում անապահով բնակչության համար համայնքային սոցիալ-կրթական կենտրոնի ստեղծման» և «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման» ծրագրերի ստորագրման արարողություն

2022թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում տեղի ունեցավ 92,159 ԱՄՆ դոլար արժողությամբ «Բերդում անապահով բնակչության համար համայնքային սոցիալ-կրթական կենտրոնի ստեղծման» և 71,044 ԱՄՆ դոլար արժողությամբ «Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման» ծրագրերի դրամաշնորհային պայմանագրերի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

«Բերդում անապահով բնակչության համար համայնքային սոցիալ-կրթական կենտրոնի ստեղծման» դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և «Պահապան» հիմնադրամի գործադիր տնօրեն տիկին Ինգա Հարությունյանի միջև:

«Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման» ծրագրի դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց պարոն Ֆուկուշիմայի և Կանանց աջակցման կենտրոնի տնօրեն տիկին Հասմիկ Գևորգյանի միջև: Արարողությանը ներկա էին ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ տիկին Տաթևիկ Ստեփանյանը:

«Բերդում անապահով բնակչության համար համայնքային սոցիալ-կրթական կենտրոնի ստեղծման» նպատակն է աջակցել տնտեսական անկախությանը և բարելավել Բերդում խոցելի բնակչության կյանքի որակը՝ կառուցելով համայնքի սոցիալ-կրթական կենտրոնը: Արդյունքում տարեկան մոտ 2,850 բնակիչ կստանա մասնագիտական դասընթացների, հոգեսոցիալական աջակցության և հետդպրոցական միջոցառումների մասնակցելու հնարավորություն:

«Ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց խորհրդատվական աջակցության կենտրոնի և ապաստարանների բարելավման» ծրագրի նպատակն է ապահովել ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց և երեխաների անվտանգությունը և բարելավել կենսամիջավայրը՝ խորհրդատվական աջակցության կենտրոնին և ապաստարաններին կենցաղային կահույք տրամադրելով, ինչպես նաև վերանորոգելով շենքերի որոշ հատվածներ: Արդյունքում տարեկան մոտ 300 կին և երեխա կշահեն Ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը փոխնախարար Ստեփանյանի ներկայությամբ

(Ձախից) Դեսպան Ֆուկուշիման, փոխնախարար Ստեփանյանը և տիկին Գևորգյանը

(Ձախից) Դեսպան Ֆուկուշիման, տիկին Հարությունյանը, փոխնախարար Ստեփանյանը և Տեր Արամը